«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝	*Հասարակագիտության տարբեր բաղադրիչների ինտեգրումը և դրանից բխող խնդիրները*
ԱՌԱՐԿԱ՝	*Հասարակագիտություն*
ՀԵՂԻՆԱԿ՝	*Չիբուխչյան Ռուզաննա*
ՄԱՐԶ՝	*Լոռի*
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝	*ՀՀ ԿԳՄՄՆ § Ստեփանավանի Հովհ.Թումանյանի անվան ավագ դպրոց՝ ՊՈԱԿ*
ՂԵԿԱՎԱՐ՝	*Մ.գ.դ., դոցենտ, ՌԲԱ պրոֆեսոր Ա. Ծատուրյան*

Ստեփանավան 2022 թ.

Բովանդակություն

1.Ներածություն

2.Գլուխ 1. Հասարակագիտության տարբեր բաղադրիչների ինտեգրումը

2.Գլուխ 2. Հասարակագիտության դասավանդման որոշ հիմնախնդիրներ

3. Եզրակացություն

4.Օգտագործված գրականության ցանկ

Ներածություն

Հանրակրթական դպրոցներում «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը կենսական անհրաժեշտություն դարձավ արդի հասարակության գործընթացների, մասնավորապես գլոբալացման, տնտեսական և հոգևոր ճգնաժամերի ու մի շարք համամարդկային հիմնախնդիրների սրվելու արդյունքում:

21-րդ դարում առավել ահագնացող մարդու օտարման և ինքնության, համատարած անտարբերության ճգնաժամերն հաղթահարելու համար խիստ անհրաժեշտ դարձավ կրթության արժեքային, փիլիսոփայական, իրավագիտակցական, աշխարհայացքային տարրը: Դեպի ժողովրդավարական հասարակություն անցման շրջանում առավելապես կարևորվեց իրավական բաղադրիչի դասավանդումը, քանի որ հնարավոր չէ քաղաքացիական հասարակության կառուցումն առանց սեփական իրավունքներն իմացող և դրանք պաշտպանել կարողացող քաղաքացու: Սակայն հետագայում «Հասարակագիտություն» առարկան համալրվեց կրթական նոր բաղադրիչներով՝ գեղագիտությունն, բարոյագիտություն, հոգեբանություն, տնտեսագիտություն, քաղաքագիտություն, փիլիսոփայություն, վերջին տարիներին նաև ֆինանսական կրթության բաղադրիչով:

Բնականաբար, այս բաղադրիչների ինտեգրումը ևս պայմանավորված էր ժամանակի հրամայականով, սակայն դասավանդման ընթացքում անմասն մնալ խնդիրներից , չհաջողվեց: Անվիճելի փաստ է այն, որ առարկան սպասված էր, որ այն նպաստում է սովորողի անձնավորության համակողմանի զարգացմանը: Ուսումնառության ընթացքում աշակերտները ոչ միայն սովորում են նոր հասկացություններ, կարողանում դրանք կիրառել անհրաժեշտության դեպքում, այլև ձեռք են բերում բազմաթիվ հմտություններ և արժեքներ, որոնք անհրաժեշտ են քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին: Նրանք կատարում են նախագծային աշխատանքներ, զեկուցումներ գրում, սահիկաշարեր պատրաստում, համայնքային հիմնախնդիրներ ուսումնասիրում:

Սակայն այս ամենը չի նշանակում, որ ամեն ինչ շատ հարթ է անցնում և չկան խնդիրներ:Խնդիրներ առաջանում են և՛ դասագրքերի հետ կապված, և՛ ուսուցիչների պատրաստվածության առումով, և՛ մեթոդական ձեռնարկների բացակայության պատճառով, և 10-12-րդ դասարաններում ժամաքանակի քիչ լինելու պատճառով:

Հենց այս խնդիրների ուսումնասիրությանն է ուղղված սույն հետազոտական աշխատանքը:

Գլուխ 1.

Հասարակագիտության տարբեր բաղադրիչների ինտեգրումը

Հասարակագիտությունը գիտություն է հասարակության մասին, ինչը կնշանակի, որ այն գիտություն է բոլորի և յուրաքանչյուրի մասին, ուստի կարևոր է հատկապես նշել, որ « Հասարակագիտություն» առարկայի նպատակն է ձևավորել հիմնարար արժեքներ կրող, հուզական հասունություն դրսևորող , կշռադատող, մարդու և հասարակության հիմնահարցերը գիտականորեն ընկալող, հետազոտող և մեկնաբանող, ճանաչողական , սոցիալական և անհատական կարողությունների ու հմտությունների տիրապետող, ազգային և համամարդկային հիմնախնդիրներին իրազեկ, ազգային և համամարդկային արժեքներ կրող, ժողովրդավարական և կայուն զարգացման արժեհամակարգով առաջնորդվող, սոցիալապես ակտիվ և պատասխանատու քաղաքացի:[1]

Հասարակագիտությունը յուրահատուկ գիտություն է.ի տարբերություն բազմաթիվ այլ գիտությունների՝ հասարակագիտությունը չի տալիս պատրաստի պատասխաններ: Այն տալիս է մտածելու ձևեր և մոտեցումներ, որոնք կիրառելով քննադատաբար յուրացնելով կարող ենք կառուցել սեփական արժեքային համակարգ ու աշխարհայացք:

Իրավամբ, «Հասարակագիտություն» առարկան այն բնագավառն է, որ սովորողին տալիս է ոչ թե պատրաստի լուծումներ կամ արդեն իսկ ձևավորված մոտեցումներ այս կամ այն հարցի շուրջ, այլ նրան նախապատրաստում է ապագայի համար, դարձնում է նրան քննադատաբար ստեղծագործող, պատասխանատու, պրպտող, կշռադատող, ազգային և համաշխարհային արժեքներ կրող քաղաքացի: Այս առումով անչափ կարևոր է տարբեր բաղադրիչների ճիշտ և համաչափ ինտեգրումը, որպեսզի ուսուցումը լինի և՛ արդյունավետ, և՛ նպատակային, ՛ երկարաժամկետ:

Հասարակագիտություն առարկայի արդիականությունը հիմնվում է ուսուցման 3 բաղադրիչների վրա՝ իմացական , սոցիալական և անձնային:

Իմացական բաղադրիչ: Ժամանակակից աշխարհում չափազանց կարևոր է հասարակական կյանքի օրինաչափությունների մասին գիտելիքներ ունենալը: Այդ գիտելիքների միջոցով մենք կարող ենք հասկանալ ու բացատրել մեզ շրջապատող աշխարհը, կառուցել արտաքին աշխարհի մասին հիմնավոր ներքին պատկերացում: Ժամանակակից աշխարհում էապես մեծացել են մարդկանց միջև առկա աշխարհայացքային տարբերությունները, ինչի արդյունքում հաճախ փորձում են մարդկանց ապակողմնորոշել, զրկել ինքնուրույն մտածելու հնարավորությունից: Այս խնդիրներին դիմակայելու համար կարևոր է , որպեսզի սովորողներն ունենան

[1] Տես՝ Հանրակրթական «Հասարակագիտություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ

քննադատական մտածողություն: «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնարավորություն է տալիս սովորել մարդու մտածողության մասին և ձեռքբերված գիտելիքներն ու հմտությունները կիրառել կոնկրետ իրավիճակներում:

Սոցիալական բաղադրիչ: Բազմաթիվ հետազոտություններ վկայում են, որ ժամանակակից աշխարհում կարևորվում են սոցիալական այնպիսի հմտություններ, ինչպիսիք են հաղորդակցությունը, համագործակցությունը, դիմացինին հասկանալու կարողությունը, կոնֆլիկտներ լուծելու հմտությունը: Շատ կարևոր են այնպիսի որակների զարգացումը, ինչպիսիք են սոցիալական համերաշխությունը, սոցիալական պատասխանատվությունը, սոցիալական ձեռներեցությունը, մասնակցությունը: «Հասարակագիտություն» առարկայի դասավանդումը հնաևավորություն է տալիս գիտելիքներ և հմտություններ ձեռք բերել սոցիալական հմտությունների մասին և դրանք կիրառել հասարակական տարբեր երևույթները բացատրելու գործընթացում:

Անձնային զարգացման բաղադրիչ: Գաղտնիք չէ, որ հասարակությունների զարգացման մակարդակը ցույց է տալիս մեծապես կախված է այն բանից, թե ինչպիսի անձնային որակներ որակներ ունեն տվյալ հասարակության անդամները, որքանով են առաջնորդվում ամբողջ կյանքի ընթացքում սովորելու պահանջով: Անձի զարգացման և ձևավորման գործում էական նշանակություն ունեն այնպիսի արժեքներ կրելը, ինչպիսիք են՝ ազատությունը, արդարությունը, պատասխանատվությունը, հանդուրժողականությունը, արժանապատվությունը: Հենց այդ արժեքների վրա հիմնվող անձը կարող է դրսևորել պատասխանատու վարքագիծ՝ գիտակցելով իր քայլերի կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքները:Արժեքների վրա հիմնվող անձնային զարգացումը «Հասարակագիտություն» առարկայի դասավանդման հիմնական նպատակներից մեկն է:[1]

Ի տարբերություն «Հասարակագիտություն» առարկայի մյուս բաղադրիչների՝ համեմատաբար ուշ ինտեգրված բաղադրիչ է « Ֆինանսական կրթության բաղադրիչը »: Ֆինանսական կրթումը վերաբերում է անձանց անձնական/ ընտանեկան/ ֆինանսների կառավարմանը և մի գործընթաց է, որն ուղղված է անձանց ֆինանսապես գրագետ դարձնելուն: Ֆինանսական կրթումը կարևորագույն գործոն է՝ անձանց ֆինանսական բարեկեցության բարձրացման , ֆինանսական կայունություն ապահովելու համար:

Ֆինանսական կրթության գլխավոր նպատակը « ֆինանսապես գրագետ անձի» ձևավորումն է՝ որպես հասարակության շարժիչ ուժի: «Ֆինանսապես գրագետ

[1] Տես՝ Հանրակրթական «Հասարակագիտություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ

անձն» այն անձն է, ով ունի գիտելիքներ, հմտություններ և մշակույթ, որոնք նրան հնարավորություն են տալիս լինել տեղեկացված, իր անձնական ֆինանսների վերաբերյալ կայացնել պատասխանատու որոշումներ, ձեռնարկել իրավիճակին համապատասխան ճիշտ գործողություններ:[1]

Շատ կարևոր է առանձնացնել «Ֆինանսական կրթությունը դպրոցում» ծրագրի հիմքում ընկած 10 սկզբունքները.

1.Ֆինանսական կրթությունը որպես կյանքի հմտություն
2.Փողի՝ որպես գործիքի ընկալում
3.Պատասխանատու որոշումներ
4.Ակտիվ ուսուցում/ուսուցման կապը կյանքի հետ/
5. Ազդեցության մասշտաբի էֆեկտ
6.Զուգահեռ ինտեգրում
7. Համակարգային մոտեցում
8. Նվազագույն կոմպետենցիաներ/կարողունակություններ/
9.Շարունակականություն
10.Աստիճանական աճ/պարզից բարդին անցում/ :[2]

Ֆինանսական կրթության արդյունքում ակնկալվում է ունենալ հետևյալ արդյունքները՝ սովորողը կիմանա, թե երբ , ինչու և ինչպես է առաջացել փողը, կգիտակցի, որ փողն արժեք ունի և այն պետք է ապահով պահվի, կկարողանա ապրանքի կամ ծառայության ինքնուրույն ընտրություն և գնում կատարել, կգիտակցի խնայողությունների դերը նպատակներն իրագործելու հարցում, կորոշի առաջնահերթ նպատակները գումար ծախսելիս կամ խնայելիս, կընկալի պարտքը որպես պարտավորություն և կգիտակցի այդ պարտավորությունը կատարելու անհրաժեշտությունը,կիմանա սպառողի իրավունքները և պարտականությունները, կօգտվի դրանցից և կլինի ավելի պատասխանատու, կգիտակցի, որ վաստակած կամ խնայած փողը կարելի է կիրառել նաև բարիք ստեղծելու, բարեգործություն կատարելու նպատակով:

Արդյունքում ձևավորվում է համապատասխան գիտելիքներ, հմտություններ և վերաբերմունք ունեցող՝ ֆինանսապես գրագետ անձ, որը ձեռք է բերում՝
•Ինքնավստահություն
•Սկզբունքայնություն
•Նպատակաուղղվածություն
•Համարձակություն
•Ֆինանսական բանիմացություն

1.Տես՝ ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարություն

2.Տես՝ Ֆինանսական կրթության մեթոդական ձեռնարկ

• Վերլուծելու կարողություն:

Այսինքն անհատի ֆինանսական գրագիտությունն արտահայտվում է նրա վերաբերմունքի փոփոխությամբ: Այժմ փորձենք քննել, թե ինչպիսին պետք է լինի ֆինանսական կրթություն իրականացնող ուսուցիչը: Ինչ մասնագիտական և մարդկային որակներով պետք է օժտված լինի, որպեսզի այսպիսի՝ խիստ կարևոր ծրագիրն իրականացնի հնարավորինս արդյունավետ:Կարծում ենք, տեղին է հիշել Ա. Էնշտեյնի խոսքերը՝ <<Եթե դուք ուզում եք ձեր կյանքում ինչ-որ փոքր բան փոխել՝ փոխեք վերաբերմունքը, բայց եթե ձեզ անհրաժեշտ են մեծ փոփոխություններ՝ փոխեք մտածելակերպը>>: Ուսուցչի ձեռքերում է ոչ միայն իր, այլ նաև իր աշակերտի կյանքը: Այսօրվա աշակերտը վաղվա քաղաքացին է, հասարակության անդամը, իր ընտանիքի, իր երկրի տերն ու ճակատագիր որոշողը: Ուստի, ցանկացած բարեփոխում սկսելուց առաջ չափազանց կարևոր է այն իրականացնողի վերաբերմունքի փոփոխությունը:Ֆինանսական կրթություն իրականացնող ուսուցիչն այս ամենը կամա թե ակամա սովորեցնում է աշակերտին, որը ցանկացած նոր գիտելիք ձեռք բերելիս պետք է քննի, ուսումնասիրի, վերլուծի, համադրի, խմբավորի, հիմնավորի... Գիտենք, որ գիտելիքը, որն աշակերտը ձեռք է բերում ակտիվ գործունեության, գործնական կիրառման, փորձարկման, հիմնավորման արդյունքում, այն հիմնավոր է և չի մոռացվի: Այդ ամենի արդյունքում ձևավորված վերաբերմունքն ու վարքագիծը կյանքի, ապագայի համար ստեղծված կարևոր հիմքեր են:<<Ուսուցիչը կարող է սովորեցնել այնքան ժամանակ, քանի դեռ ինքն է սովորում: Հենց նա դադարի սովորելուց,կդադարի ուսուցիչ լինելուց>>,- ասել է Ջոն Լոկը:Ուստի, հարկ է կարևորել մի հանգամանք ևս, որպեսզի ուսուցումը լինի արդյունավետ, անհրաժեշտ է առաջին հերթին կոտրել ուսուցանողների մեջ արմատացած որոշակի կարծրատիպեր կապված հատկապես խնայողության մշակույթի ձևավորման հետ: Բացի այդ, այս ամենն ունի նաև շատ լուրջ սոցիալական կողմ: Քանի որ ներկա պայմաններում ուսուցիչներն հասարակության ամենացածր վարձատրվող շերտի մեջ են մտնում, առաջ են գալիս այլ ավելի լուրջ խնդիրներ, երբ նրանց մոտ կորում է մոտիվացիան , կամ շատ հաճախ հենց իրենք են դառնում ֆինանսական զեղծարարությունների զոհ:

Ֆինանսական կրթության գլխավոր նպատակը , թերևս, աշակերտների միջոցով ֆինանսական գիտելիքների ներթափանցումն է ընտանիք, սակայն այստեղ ևս առաջանում են որոշակի խնդիրներ:Միշտ չէ, որ ընտանիքում պատրաստ են լսել և ընդունել այն, ինչը սովորողը դպրոցից տանում է, շատ հաճախ նույնիսկ քամահրանքով են վերաբերվում ֆինանսական գիտելիքների փոխանցմանը՝ թյուր կարծիք ունենալով դրա մասին: Ուստի ֆինանսական գրագիտության բարձրացմանն ուղղված ջանքերը պետք է կրեն համալիր և ամբողջական բնույթ՝ մշտապես ապահովելով դպրոց-սովորող-ընտանիք-հասարակություն-դպրոց շղթայի բոլոր մասնակիցների ակտիվ ներգրավվածությունը:

Ֆինանսական առողջությունը նույնքան կարևոր է, որքան ֆիզիկականն ու հոգեկանը:Ուստի դրա մասին ևս պետք է մտածել, հոգ տանել փոքրուց: Ֆինանսական կրթություն իրականացնող ուսուցիչները հստակ պետք է գիտակցեն ծրագրի կարևորությունը:Բոլորը պետք է կարևորեն ֆինանսական կրթությունը՝ որպես երկրի ֆինանսական կայունության, ֆինանսական ներգրավվածության և քաղաքացիների տնտեսական բարեկեցության կարևոր նախադրյալ:

Գլուխ 2.

Հասարակագիտության դասավանդման որոշ հիմնախնդիրները

Հասարակագիտությունը հայրենասիրությանը և հայրենապահպանությանը նպաստող կարևորագույն բնագավառ է, որի շնորհիվ անհատը կարողանում է ոչ միայն հարմարվել շրջապատող իրականության հարահոսուն պայմաններին/ երբ մեկ մարդու կյանքի ընթացքում կարող են հաստատվել տարբեր ՝ անգամ իրարամերժ մշակութային հարացույցներ/,այլև ձևավորել սեփական արժեքային համակարգը, աշխարհայացքն ու կայուն լինել արտաքին տարատեսակ ճնշումների հանդեպ:

Հասարակագիտական – քաղաքացիական կրթության շնորհիվ անձը գիտակցում է իր պատկանելիությունն ավելի մեծ հանրությանը, ձեռք է բերում պետական մտածողության տարրեր, հարգում սեփական պետության խորհրդանիշներն ու պատրաստ լինում նպաստել պետության բարեկեցությանը իր ուժերի ներածին չափով:[1]

Հասարակագիտությունն այն բնագավառն է, որն իր մեջ պարունակում է հասարակության ժողովրդավարացման մեծագույն ներուժ, քանի որ թե սովորողների , թե իրապես ուսուցանողների մեջ զարգացնում է առաջնորդման , մասնակցության , հանդուրժողականության , բախումների դրական հաղթահարման հմտություններ, հնարավորություններ տալիս արժևորելու մի շարք հասարակական իրողություններ ու կառուցելու սեփական գիտակցված մոտեցումը:

Այս համատեքստում շատ կարևոր է, որ դասավանդումը լինի ոչ միայն զուտ ինֆորմատիվ, այլև պարունակի հմտությունների ու արժեքների զարգացման հնարավորություններ: Հատկանշական է, որ գիտության զարգացումը մեզ լավ հնարավորություն է տալիս հասկանալու, թե ինչպես է տեղի ունենում սովորելու գործընթացը: Երբ արտաքին աշխարհից տեղեկատվություն ենք ստանում, այն սկզբում առնչվում է մեր կարճաժամկետ կամ աշխատանքային հիշողությանը: Որպեսզի կարողանանք արտաքին աշխարհից տեղեկություն ստանալ, մեզ պետք է ուշադրության կենտրոնացում: Ուշադրությունը կարևոր է ոչ միայն ուսուցման համար, այլև այսօր համարվում է մարդու կյանքի կարևորագույն ռեսուրսը: Համենայնդեպս, բիզնես ընկերությունները նույպես հասկացել են, որ մարդու վրա ազդելու համար առաջնայինը նրա ուշադրությունը գրավելն է: Եթե կարողանաք մարդու ուշադրությունը գրավել, ապա կարող եք տիրանալ նրա ժամանակին, փողերին ու ազդել նրա վրա: Պատահական չէ, որ Նոբելյան մրցանակի դափնեկիր

[1] Տես «Հասարակագիտության դասավանդման որոշ հիմնախնդիրներ» հոդված, Սիլվա Պետրոսյան 2012թ.

Հերբերտ Սայմոնը շրջանառության մեջ է դրել «ուշադրության տնտեսություն» արտահայտությունը: Ժամանակակից կրթության մեծագույն խնդիրներից մեկն այն է, որ աշակերտների ուշադրությունը գրավված է տարբեր բիզնես ինդուստրիաների, գործունեության տեսակների կողմից: Եվ այդ մրցակցության մեջ կրթությունը պարտվողի դերում է:

Մարդկային ապրելակերպում ընդունված է, որ ի տարբերություն չափահասների՝ երեխաները ոչնչով զբաղված չեն: Հետևաբար՝ նրանք պետք է պարապեն, սովորեն: Այսօր երեխաների կյանքին բիզնես ինդուստրիաների ակտիվ միջամտության արդյունքում աշակերտներն այլևս պարապ չեն, ժամանակ չունեն: Նրանց ուշադրությունը գրավում են զանազան համակարգչային խաղերը, սպորտային հանդիպումները, սերիալները, սոցիալական ցանցերը: Որպեսզի սովորելու գործընթացը հնարավոր լինի, կրթության համակարգը պետք է փորձի գրավել աշակերտների ուշադրությունը:

Այսպիսով՝ սովորելը հնարավոր դարձնելու առաջին քայլը ուշադրության կենտրոնացումն է: Երբ աշակերտը կենտրոնացնում է ուշադրությունը, ուսուցանվող նյութը տեղափոխվում է աշխատանքային կամ կարճաժամկետ հիշողության մեջ: Իսկ ինչպես գրավել սովորողների ուշադրությունը:

Կրթության մեջ առանցքային դեր և նշանակություն ունի դասագիրքը:Դասագրքերի հետ կապված կան տարբեր մոտեցումներ: Մի մոտեցման համաձայն դասագիրքը պետք է լինի պարզապես տեքստերի հավաքածու, իսկ այդ տեքստերի հետ վարվելու եղանակներն ու մոտեցումները պետք է որոշի ուսուցանողը: Այս առումով առավել հավանական է, որ ուսուցիչը պարզապես առաջարկի աշակերտներին սերտել-յուրացնել առաջարկվող տեքստերն, այնուհետև դրանք պասիվ կերպով վերարտադրելու համար, այդ դեպքում դասագիրքը ստիպված է իր վրա վերցնել նաև ուսուցանողին մեթոդապես ուղղորդողի դերը: Սակայն այս պասիվ ուսուցումը մեր ժամանակակներում այլևս չի կարող ցանկալի արդյունքի հասցնել: Ուստի սովորողների ուշադրությունը գրավելու համար ուսուցիչը պետք է դասը համեմի տարբեր մանկավարժական մեթոդներով, հնարներով, տեղեկատվական գործիքների կիրառմամբ հարստացնի դասը, կազմակերպի նախագծահետազոտական աշխատանքների իրականացում, աշակերտներին մշտապես խթանի նորը փնտրելու, ստեղծագործական- քննադատական մտածողության ձևավորման գործում: Այս դեպքում, կարծում ենք , ավելի հեշտ կլինի հասնել ցանկալի վերջնարդյունքներին:

Մի կարևոր հանգամանքի ևս անդրադառնանք: Շատ հաճախ դասագրքերում առաջարկվում են զույգերով աշխատանքներ, երբեմն՝ խմբային, երբեմն՝ բանավեճ-քննարկումներ, հետազոտական աշխատանքներ, արժևորելուն միտված խորհրդածություններ և այլն:Բայց այս ամենի հետ մեկտեղ ցանկալի կլիներ ունենալ ուսուցչի առավել ընդգրկուն և մեթոդապես հարուստ ձեռնարկներ, հատկապես

հասարակագիտության բազմաբնույթ և ծավալուն բաղադրիչների ճիշտ ինտեգրումն ապահովելու համար:Հարկ է նշել, որ դասագրքերին զուգահեռ ստեղծված ուսուցչի ձեռնարկները և ծավալային առումով են սեղմ /օրինակ, 10-12-րդ դասարանների համար ուսուցչի մեկ միասնական ձեռնարկ է լույս ընծայվել, որի ընդհանուր ծավալը մոտ 5 անգամ պակաս է այդ երեք տարիների դասագրքերի ընդհանուր ծավալից/ և հիմնականում պարունակում են նորմատիվային բնույթի տեղեկություններ, այնինչ ցանկալի կլիներ, որ ուղեցույցի դեր կատարեին՝ ցույց տալով դասավանդողին չափորոշչային նպատակներին հասնելու ուղիներն ամեն կոնկրետ դասի համար: Այս խնդիրը անչափ կարևոր է, քանի որ հասարակագիտություն առարկան մեծամասամբ դասավանդում են հարակից մասնագիտության տեր ուսուցիչները:

Հաջորդ խնդիրը, որին պետք է անդրադառնանք, այն է, որ մեր դասագրքերում, դասերի ժամանակ հաճախ ականատես ենք լինում իրավիճակների, երբ կարճ ժամանակում աշակերտներին փոխանցվում են մի քանի տասնյակ նոր անուններ, տերմիններ ու հասկացություններ: Մարդու կարճաժամկետ հիշողության հնարավորությունները սահմանափակ են, այսինքն՝ մարդը չի կարող միանգամից շատ բան սովորել: Ըստ գիտնականների՝ մարդը կարող է միանգամից սովորել լավագույն դեպքում 9-10 նոր բան:[1]

Իսկ ի՞նչ կարելի է անել, որ աշակերտները հնարավորինս շատ բան սովորեն: Մասնագետները խորհուրդ են տալիս նոր նյութը սովորեցնելիս օգտագործել գծապատկերներ, պատմություններ, որպեսզի աշակերտները կարողանան լավ յուրացնել նյութը: Կարևոր է նաև նյութի կապակցված ուսուցումը: Եթե ուսուցանում եք անջատ փաստեր, ապա աշակերտները քիչ բան կարող են սովորել:Այս առումով խնդիրներ են առաջանում հասարակագիտության ուսուցման ժամանակ, քանի որ հասարակագիտության բաղադրիչների մեջ տրամաբանական շղթան երբեմն կտրվում է, ուսուցումը դառնում է ոչ կապակցված: Օրինակ՝ 8-րդ դասարանի հասարակագիտության համեմատաբար շատ պարզ, նույնիսկ երբեմն այդ տարիքին ոչ բնորոշ պարզ շարադրանքից հետո 9-րդ դասարանում աշակերտներին միանգամից առաջարկվում է դասանյութ, որը գրված է շատ բարդ, իրավաբանական տերմիններով հագեցած և նախորդ տարվա բաղադրիչի հետ գրեթե ոչ մի առնչություն չունեցող: Նույն սկզբունքով են կազմված նաև հասարակագիտության 10-12-րդ դասարանների բաղադրիչները: Այս ամենը դիտարկենք օրինակներով: 9-րդ դասարանում հասարակագիտությունը ամբողջովին միտված է քաղաքացիական կրթությանը, ընդգրկում է Ժողովրդավարական հասարակության, քաղաքացիության, հանրային քաղաքականության, մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների,

1.Տես՝ Սերոբ Խաչատրյան «Ուսուցման արդյունավետ հնարներ» 2020թ.Երևան

քաղաքացիական հասարակության տնտեսական համակարգի մասին թեմաները իրենց ենթաթեմաներով: Եվ ահա 10-րդ դասարանի հասարակագիտությունը իր մեջ ներառում է միանգամից 4 բաղադրիչ՝ Գեղագիտություն, Բարոյագիտություն, Հոգեբանություն, Տնտեսագիտություն, որոնք որևէ ձևով չեն շաղկապվում 9-րդ դասարանի դասագրքի բովանդակությանը: Որքան էլ որ այս բաղադրիչները շատ հետաքրքիր ու սպասված են, ուսումնասիրության համար ցանկալի ու կարևոր, միևնույն է, երբ բացակայում է տրամաբանական կապը, նախորդ դասարանում սովորածը, որը պահպանվել էր աշակերտների կարճաժամկետ հիշողության տիրույթում, շատ հաճախ նույնիսկ մոռացության է տրվում:

Հասարակագիտությանը 10-րդ դասարանի դասագրքով ուսումնասիրում ենք չորս բաղադրիչ՝ գեղագիտություն, բարոյագիտություն, հոգեբանություն և տնտեսագիտություն:Դրանց ուսումնասիրությունը ավագ դպրոցում կայուն է: Անձնական և հասարակական կյանքում հաճախ են առնչվում խնդիրների, որոնց լուծումները որոնելիս կարիք են զգում գիտելիքների, հմտությունների ու արժեքային կողմնորոշիչների, որոնք կարող են ձեռք բերվել տվյալ բաղադրիչները սովորելու շնորհիվ: Բայց ցավոք արդի 10-րդ դասարանի դասագիրքը չի ապահովում ներառարկայական կապը այս չորս բաղադրիչների միջև: Դրանք հատուկ տարանջատված են և կապ չկա նրանց միջև: Եվ միայն ուսուցչի մեթոդապես բարձր պատրաստվածությունն ու հմտությունները կարող են արդյունքի հասցնել:

Անդրադառնանք նաև 11-րդ և 12—րդ դասարանների դասագրքերի բովանդակությանը:10-րդ դասարանի հասարակագիտության դասագրքին որևէ ձևով չի շարունակում 11-րդ դասարանի դասագիրքը, որը ներառում է «Իրավունքի հիմունքներ» և «Քաղաքագիտություն» բաղադրիչները: Այս խիստ տարանջատումը աշակերտների մոտ տպավորություն է ստեղծում, որ նախորդ տարվա դասանյութն ավելի դյուրըմբռնելի էր, քանի որ 11-րդ դասարանի հասարակագիտության դասագիրքը հագեցած է հաճախ նույնիսկ ակադեմիական մակարդակի հասնող իրավաբանական հասկացություններով, սահմանումներով: Կան թեմաներ, որոնք ուսումնասիրվում են իրավաբանական բաժնի բարձր կուրսերում: կան իրավաբանական հասկացություններ,որոնք պետք է բացատրվեն և մեկնաբանվեն իրավաբանի կողմից:Աշակերտների մոտ ծագում են հարցեր, որոնց պատասխանը կարող է տալ միայն մասնագիտությամբ իրավաբանը: Եվ ինչպես նախորդում այստեղ ևս ուսուցչի կողմից պահանջվում է մեծ ջանքեր առարկան ճիշտ և բովանդակալից մատուցել, որպեսզի աշակերտը առօրյա կյանքում կարողանա կիրառել:

Եվ, վերջապես, անդրադառնանք 12-րդ դասարանի հասարակագիտության դասագրքին, որը , մեր խորին համոզմամբ, հասարակագիտության դասագրքերից ամենահաջողվածն է : Այն անչափ կարևոր ու հետաքրքիր բաղադրիչ ունի՝ փիլիսոփայությունը:Դավիթ Անհողինի խոսքերով ասած՝ մարդկային

զբաղմունքներից ամենագեղեցիկն ու պատվականը: Կարծում ենք, որ շատ կարևոր է այդ բաղադրիչը հենց 12-րդ դասարանում ուսումնասիրելը, քանի որ մեր՝ արդեն պատանի դարձած սովորողները հնարավորություն են ստանում շատ կարևոր հարցերի շուրջ խորհել, մտորել բոլորովին այլ տեսանկյունից: Փիլիսոփայության անծայրածիր ու անսահման ոլորտի ուսումնասիրությունը զուգորդվում է բազմաթիվ խոհափիլիսոփայական մեջբերումներով, հարցադրումներով, որոնք կյանքի նոր փուլ մտնող պատանիներին ստիպում են այս կամ այն հարցի շուրջ ունենալ դիրքորոշում և օգնում են հստակ ձևակերպել իրենց աշխարհայացքը: Ինչ խոսք, սա անչափ կարևոր է, նույնիսկ 12-րդ դասարանցիներին շատ հաճախ կտրում է անընդհատ իրենց հետապնդող առաջիկա քննաշրջանի նկատմամբ ունեցած վախից, հնարավորություն տալիս խորհել շատ արժեքավոր հարցերի շուրջ, օգնում է ճանաչել սեփական անձը, ժամանակակից հարափոփոխ աշխարհը, կողմնորոշվել հասարակական բազմաբնույթ հարաբերություններում, ինքնուրույն որոշումներ կայացնել:

Եվ , ի վերջո, հարկ է նշել մի շատ կարևոր փաստ, նոր գիտելիքներ ձեռք բերելու աշակերտի հնարավորությունը մեծապես կախված է այն բանից, թե գիտելիքների նախնական ինչ պաշար ունի աշակերտը: Մեր գիտելիքների պաշարը պահեստավորվում է երկարատև հիշողության մեջ: Այն աշակերտները, ովքեր ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից: Սրանից կարելի է կարևոր եզրահանգում կատարել՝ որքան շատ գիտելիքներ ունեք, այնքան հեշտ ու շատ կարող եք նոր բաներ սովորել: Եթե կարճաժամկետ հիշողության առանձնահատկությունը սահմանափակ լինելն է, ապա երկարաժամկետ հիշողության առանձնահատկությունն այն է, որ այնտեղ մնում է խորքային առումով լավ հասկացած գիտելիքը: Այսինքն՝ այն ամենը, ինչը մենք մակերեսային ենք հասկացել, մնայուն չէ: Ցավոք, մեր կրթական համակարգը կառուցված է այնպես, որ մենք ավելի շատ մակերեսային բաներ ենք սովորում: Մեր կրթական համակարգը վազք է կրթական ծրագրի հետևից, ինչի պատճառով աշակերտները չեն հասցնում խորքային գիտելիքներ ձեռք բերել: Այս առումով, որպեսզի աշակերտները ունենան մնայուն գիտելիքներ, պետք է ուսուցանվող նյութը կրկնելու, ամրապնդելու, կիրառելու, կապակցելու հնարավորություններ ընձեռվեն, ընդ որում՝ դա պետք է արվի կանոնավոր և շարունակական ձևով, ինչը շատ հաճախ ուղղակի հնարավոր չէ իրականացնել, քանի որ մեկ դասաժամի ընթացքում մեծաքանակ ինֆորմացիա ենք տրամադրում աշակերտին, և հետո փորձում այդ մեծաքանակ ինֆորմացիան հետադարձ կապով ընդունել: Այլ կերպ ասած՝ պետք է կարևորել ոչ միայն ուսումնական ծրագրի ընդգրկումը, այլև խորությունը:

Եզրակացություն

Ուսումնասիրելով «Հասարակագիտություն առարկայի նպատակները, ուսումնառության ընթացքում ի հայտ եկող խնդիրները, հանգեցինք այն եզրակացության, որ «Հասարակագիտությունը», որպես ամենաբազմազան բաղադրիչներ ունեցող առարկա, ենթակա է առանձնակի հատուկ ուշադրության:Շատ կարևոր է, որպեսզի առաջարկվող չափորոշիչներին համապատասխան կազմվելիք դասագրքերում հաշվի առնվեն բարձրացված խնդիրները:Կարծում ենք , որ բոլոր դասագրքերին համապատասխան պետք է լինեն ուսուցչի ձեռնարկներ, ուսումնաօժանդակ նյութեր, որպեսզի ուսուցիչն ավելի հստակ եղանակներով և մեթոդներով հասնի սահմանված վերջնարդյունքների իրականացմանը:

Հաջորդ կարևոր եզրահանգումը հետևյալն . հասարակագիտության բաղադրիչների մեջ չպետք է լինեն խիստ տարանջատումներ, պետք է ուսումնական նյութը լինի կապակցված, որպեսզի պահպանվի սովորողների երկարատև հիշողության մեջ:

Ուսումնասիրության ընթացքում ևս մի կարևոր և մտահոգիչ խնդրի բախվեցինք: Դպրոցներում «Հասարակագիտություն» առարկան հիմնականում դասավանդում են հարակից առարկաների մասնագետները, ովքեր միշտ չէ, որ տիրապետում են միայն հասարակագիտությանը բնորոշ առանձնահատկություններին: Հարակից առարկաների մասնագետները միշտ չէ, որ կարողանում են ուսումնական նյութն ամբողջ խորությամբ մատուցել, որովհետև շատ հաճախ միջառարկայական կապերն ապահովելիս տուժում է հասարակագիտական ոլորտը:Այս առումով շատ կարևոր է «Հասարակագիտություն» առարկայի վերապատրաստումները , սեմինարները դարձնել առավել բովանդակալից, առարկայական, ամենակարևորը՝ այլ առարկաներից անջատ, որպեսզի ուսուցիչները կարողանան այս համընդգրկուն ու ծավալուն բնագավառին առնչվող բոլոր խնդիրները բարձրաձայնել և փորձել գտնել լուծումներ:

Ի վերջո, « Հասարակագիտությունը» այն եզակի առարկան է, որի բովանդակային կողմը հարափոփոխ է, քանի որ այն կրթում և դաստիարակում է ապագայի քաղաքացու, ով պետք է այս հարափոփոխ աշխարհին համահունչ քայլի: Ուստի

կարծում ենք, որ ուսուցիչը ևս պետք է համընթաց քայլի այդ փոփոխություններին և չդադարի ինքնակրթվել, օգտվի մեթոդական բազմազանությունից, ապահովի ինտերակտիվ ուսուցում, տիրապետի ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներին, որպեսզի հագեցած դասի արդյունքում կարողանա հասնել ցանկալի վերջնարդյունքին,այն է՝ սովորողի մոտ ձևավորել հիմնարար կոմպետենցիաները /կարողունակություններ/ , ինֆորմացիայի բազմազանության մեջ ճիշտ կողմնորոշվելու ունակություն, դարձնել նրան քննադատաբար ստեղծագործող, պատասխանատու, պրպտող, կշռադատող, ազգային և համաշխարհային արժեքներ կրող քաղաքացի:

<<Հասարակագիտություն>>առարկայի վերապատրաստումներին, սեմինարներին ընդգրկվեն նաև իրավաբաններ, որոնք կօգնեն ուսուցիչներին ստանալու իրենց հուզող հարցերի պատասխանները:

Գրականության ցանկ

1. Ուսուցման արդյունավետ հնարներ -Ս. Խաչատրյան, Հայաստան 2020թ.

2. Մարդ և հասարակություն գիտամեթոդական վերլուծական ամսագիր N 2.2012թ.

3. ՀՀ ֆինանսական կրթման ազգային ռազմավարություն

4. «Ֆինանսական կրթության ձեռնարկ» Հասարակագիտություն

5. Հանրակրթական «Հասարակագիտություն» առարկայի ուսումնառության հայեցակարգ